

նը. աշակերտները կը փոխադրուին Ադոլօ : Վարուժանը ինձմէ անբաժան էր. վարժարանական ուսումնական շրջանին խտրացի վարժապետներէն սորված էր խտրացի դասականներուն քնարերգութեան պատմութիւնը. նորերուն վրայ բնաւ տեղեկութիւն չունէր. այդ մասին իմին առաջնորդութիւնս կը խնդրէր. ես սիրայօժար կը փատարէի իր փափաքը, անոր առջեւ կը բանայի գրատունս, անոր արամադրութեան տակ կը դնէի ամբողջ ազգային եւ օտարազգի նորագոյն հեղինակները . կը խօսէի խտրացի մտաւորական նոր շարժումին վրայ, կը յանձնարարէի կարգաւ Կարդուչէի, ՏԱՆնունցիոյի, Վիկտորիա Ադանուրի, եւ Ադա Նեզրիի քերթուածները : Զանոնք լրջօրէն վճարուածներէր եւ կ'իւրացնէր անոնց քերթողական արուեստի նրբութիւնները :

Սակայն, ես ինչ որ գիտեցի, Վարուժանի նախամեծար հեղինակներն էին եւ կը մնային Եէքապիրը, Լամարտինը, Վիկտոր Հիւկոն, Ռասսինը եւ Շատորբեանը. մեր ազգային հեղինակներէն ամենէն աւելի կը կարգար Հ. Արսէն Բաղբասունին, Հ. Ալիշանը եւ Ռաֆֆին ու Արուսեանը : Ասոնց համար, ան, ունէր գերազոյն հիացում մը, եւ ինծի կ'ըէր, թէ այդ հեղինակները ամենէն աւելի ուժեղօրէն ազգածեն իր վրայ : Զանոնք կը յանձնարարէր իր ընկերներուն : Այդ գիրքերէն աւելի սերտօրէն կապուած էր հինգ հատոր Փրանսերէն «Քանգարաններուն», որոնց վրայէն դաս կուտար փոքր աշակերտաց : Իր արուեստի քնար հոգին կը փոխանցէր կրտսեր ընկերոջ Յէվսէփ Բարապաճագեանի ,որ իր կարգին աշակերտութեան ստան «Բազմապէս»ի եւ «Անահիտ»ի մէջ հրատարակեց այնքան գեղեցիկ քերթուածներ, որ պատիւ բերաւ իր վարպետին :

Վարժարանին մէջ, աշակերտները՝ Վարուժանին վրայ կը կը գուրգուրային : Հայերէն եւ Փրանսերէն դասերուն մէջ տկար աշակերտաց համբերութեամբ եւ խնամքով կ'օգնէր : Արհամարհուածներուն վրայ մանաւանդ իր բարոյական անկողութիւնը զգալի կ'ըլլար : Վայնազարեան մականունով կրտսերագոյն աշակերտին վրայ անտպոր ինամք մը ցոյց կուտար, անոր կրթութեան համար գերագոյն ճիւղ մը կը թափէր : Երկչոտ մըն էր, ինչպէս ամէն գրող, ամէն երգող. ընդգրգող, սակայն, մեծե-

րուն եւ հաւասարներուն հանդէպ, որոնց իր բանաստեղծ խանութեամբ յատուկ հրովիւնը ցոյց կուտար : Ան իր սիրտը կուտար ազգին, իր քնարն ալ հայրենիքին : Բարի էր, զի բանաստեղծ էր. եւ արդէն ճշմարիտ բանաստեղծը երբեք չար չըլլար :

Գլորացական այդ արձակուրդի օրերուն, վարժարանի ամբողջ աշակերտները կ'առաջնորդէի դէպի Կրասպայի ստորոտը : Վարուժան մեզի հետ էր : Կէսօրի մօտ կը ակօխ ամպորոտ դուռով, եւ տեղատարախ անձրեւ մը : Աշնան վերջերն էինք. ցուրտը զգալի էր : Ես չափազանց մոտաւանջ, տաղնապած եւ շուարած, կը մտածէի, թէ այդ անմարդաբնակ, անտուն անապատին մէջ ի՞նչ ճար կրնայի ընել. աշակերտները կրնային հիւանդանոց, զգեստներ ջուրերուն մէջ թափախ : Աշակերտները կը խնդային, չէին ըմբռներ իմ վիճակը, չէին ըմբռներ, որ իմ վրաս պատասխանատուութիւն մը կը ծանրանար : Աշակերտներէն մեծ մասը արդէն շատ հեռացեր, ստանարանէն վեր կը մազլցէին :

Վարուժանը ինծի հետ էր, մենք միասին փոքր աշակերտաց հետ առաջ երթալով դասեր մատուց «Սանդ Անտրէան» այդ անտունով ձորին մէջ, եւ մնն հաւաքեցինք աշակերտներէն մէկ մասը : Անձրեւը կը սաստկանար, կ'աճէր նաեւ իմ մտատանջութիւնս : Վարուժան կը տեսնար իմ տաղնապս, կը գլխար վրաս, եւ զիս միւթարելու համար, կ'ըէր ինծի. «Մի՛ տանջուիր, վարդապետ, մեզի համար այս գուարձութիւն է. մենք աշակերտներս ասիկէ համ կ'առնենք» : Ժամ մը վերջը տղաքները թաշկիւնակնին սառ լեցուցած հասան՝ «Դաշնակցական» քայլերգով :

* * *

Անցան օրեր, գիւղէն վեհնտիկ վերադարձի ժամանակը հատած էր : Վարուժան ճգնաժամի մէջ էր. Լօզանի համալսարանի դուռը դարներու կը պատրաստուէր եւ կը մերժուէր : Ամէն օր, մէկ քանի անգամ ինծի կը գլխէր, որ ես ճար մը գտնամ, որ իր համալսարանի խնդիրը յաջողի : Հ. Սարեան մեծաւոր վարդապետին յայտնեցի Վարուժանին խնդրանքը, երկարօրէն փատարանեցի եւ պարզեցի խնդիրը եւ ցոյց տուի, թէ ի՞նչ կերպով կարելի էր բացառիկ միջոցներով համալսարանական թոշակ